

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02.10.2018Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

« 02 » հոկտեմբերի 2018թ.  
Ժամը՝ 10.30

1. Վանաձոր համայնքի ավագանու 2018թ. հոկտեմբերի 02-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ՝ Մ.Ասլանյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 20 հուլիսի 2018 թվականի թիվ 81 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ՝ Ս. Աբովյան

ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ.  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Վանաձոր համայնքի ավագանու 2018թ. հոկտեմբերի 02-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2018թ. հոկտեմբերի 02-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ.՝ Մ. Ասլանյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 20 հուլիսի 2018 թվականի թիվ 81 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ՝ Ս. Աբովյան

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՀՈՒԼԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հինք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Հայկ Մայադյանի 28/10/2018թ. թիվ 134-ԱԾԻԳ գրությունը, «Է. Ապրեայան» ՄՊԸ-ի կողմից 28.09.2018թ. տրված կադաստրային քարտեզից քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, դեկլարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

Վանաձոր համայնքի ավագանու 20 հուլիսի 2018 թվականի «Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 2/42 հասցեում գտնվող հողամասը նվիրատվության պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին» թիվ 81 որոշման 1-ին կետում «3.172» թիվը փոխարինել «3.21666» թվով:



28.10.2018թ.  
№ 1-34-ԱԾԻԳ


ՎԱՆԱԾՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ  
ՊԱՐՈՆ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասլանյան

Ինչպես տեղյակ եք «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ համար քաղաք Վանաձոր, Գ. Նժդեհի փողոց 2/42 հասցեում գտնվող 3,172 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցվել են նոր մասնաշենքեր: ՀՀ օրենքով սահմանված կարգով շենքերի գրանցումն իրականացնելու համար համայնքային ենթակայության 3,172 հեկտար մակերեսով հողամասը Վանաձոր համայնքի ավագանու 20.07.2018թ. թիվ 81 որոշմամբ նվիրվել է Հայաստանի Հանրապետությանը:

Կից՝ ներկայացնում եմ հողամասի և նորակառույց շենքերի չափագրումն իրականացնող «Է. Ապրեսյան» ՍՊԸ կողմից տրամադրված կադաստրային քարտեզից քաղվածք, համաձայն որի հողամասի մակերեսը չափագրման արդյունքում տարբերվում է 07.07.18թ. թիվ 17072018-06-0074 կադաստրի վկայականի համաձայն Վանաձոր համայնքի սեփականությունը համարվող և ավագանու վերը նշված որոշմամբ Հայաստանի Հանրապետությանը նվիրած հողամասի մակերեսից:

Հաշվի առնելով վերը նշվածը, խնդրում եմ իրականացնել նորակառույց շենքերով ծանրաբեռնված հողամասի սահմանների ճշտում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ  ՀԱՅԿ ՍԱՅԱՐՅԱՆ


կատարող՝ ԱԾԻԳՊՀ,  
Մ. Աղաջանովա  
29-75-37, 29-75-38

ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4  
49/4 Komitasstr., Yerevan 0051, Armenia

Հեռ. Tel: (37410) 29-75-36; 29-75-37 Գաքս: Fax(37410) 29-75-39  
Էլ. Փոստ: e-mail: [info@healthpiu.am](mailto:info@healthpiu.am)

**ՔԱՂՎԱԾՔ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ**

Հասցե՝ ք.Վանաձոր, Գ. Նժդեհի փողոց 2/42  
 Ծածկագիր՝ 06-001-0347-0130  
 Հողամասի մակերես՝ 3.21666 հա



«Է. ԱՊՐԵՄՅԱՆ» ՍՊԸ

(Որակավորման վկայական N 0202, տրվ. 29.05.2012թ.)

|        |            |                    |             |
|--------|------------|--------------------|-------------|
| Տնօրեն | 28.09.2018 | <i>[Signature]</i> | Է. ԱՊՐԵՄՅԱՆ |
|--------|------------|--------------------|-------------|

